Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
«1032-11002/2025-ԼԿ1» պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N1

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» (Վանաձոր 1) |
| Դրամաշնորհի N | «1032-11002/2025-ԼԿ1» |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 03.01.2025 - 31.12.2025 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2025 - 30.06.2025 |
| Ներկայացման օր | 11.07 .2025 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգար Կարապետյան, ծրագրի ղեկավար |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորված գործողություններն են.

1) սոցիալ-հոգեբանական օգնություն և խորհրդատվություն
2) կենցաղային սպասարկում
3) բժշկական օգնություն և սպասարկում
4) Լվացքատան ծառայություն

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացը՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

<u>**Սոցիալ-հոգեբանական օգնություն և խորհրդատվություն**</u>

Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողի կողմից կատարվել է եռամսյակի ընթացում ուղեգրված թվով 7 շահառուների անհատական կարիքի գնահատում և ըստ գնահատման կազմվել է անհատական սոցիալական ծրագիր: Կատարվել է նաև ծրագրի մյուս 64 շահառուների կարիքի վերագնահատում: Գնահատվել է անցած 6 ամիսների վիճակը և ըստ այդ գնահատումների շարունակվում են մատուցվել խնամքի ծառայությունները:

Ծրագրում ընդգրկված նոր շահառուների հետ կնքվել են ծառայությունների մատուցման

պայմանագրեր:
Եռամսյակում սոցիալական աշխատողների կողմից կատարվել են տնային այցելություններ շահառուների բնակարաններ, ծանոթացել շահառուների սոցիալ-առողջապահական ընթացիկ վիճակին:
Կատարվել են 7 շահառուների ապրիլ-հունիս ամիսների փաստագրում անապահովության գնահատման համակարգում՝ տարեկան սոցիալական աջակցություն ստանալու համար:
Կատարվել է 1 շահառուի փաստագրում անապահովության գնահատման համակարգում՝ միանվագ եռամսյա դրամական աջակցություն ստանալու համար:
Կատարվել է 6 շահառուների թոշակի գրքույկների թարմացում:
Կատարվել է 1 շահառուի համար Վանաձորի համայնքապետարանում դիմումի ներկայացում՝ համայնքի կողմից տրամադրվող փառելափայտի օգնությունից օգտվելու համար:
Ծվով 1 շահառուի համար կատարվել է Վանաձորի համայնքապետարանից գույքահարկի վերաբերյալ տեղեկանքի ստացում, հատկացում շահառուին:

**Կենցաղային սպասարկում**

Հաշվետու ամիսներին սոցիալական խնամողների կողմից կատարվել է կենցաղային սպասարկում ՝ ըստ պետական չափորոշիչների՝ Ա խմբի շահառուներին կատարելով ամենօրյա այցեր, իսկ Բ խմբի շահառուներին՝ շաբաթական 2-ական այցեր: Այցելությունները կատարվել են նախապես կազմված այցելությունների գրաֆիկներին համապատասխան:
Սոցիալական խնամողները մատուցել են հետևյալ ծառայությունները. Մարմնի ամբողջական, մասնակի խնամք, տակդիրի փոխում, լոգանք, անձնական հիգիենայի պահպանում, սննդի պատրաստում, կերակրում, լվացքի կազմակերպում, արդուկում, բնակարանի հարդարում, գնումներ, կոմունալ վճարումներ: Շահառուներին ուղեկցել են նաև խանութ, վարսավիրանոց, բանկ՝ քարտային թոշակը կանխիկացնելու համար:
Հաշվետու ժամանակահատվածում գործել է նաև լվացքատունը, որտեղ լվացվել, արդուկվել են շահառուների հագուստները և հատկացվել վերջիններիս: Այն շահառուները, ովքեր իրենց բնակարաններում ունեն լվացքի մեքենաներ, սոցիալական խնամողները լվացքը հագուստները լվացել են շահառուի բնակարանում:

**Բժշկական օգնություն և սպասարկում**

Ապրիլ-հունիս ամիսներին բուժքույրերը շահառուների բնակարաններ այցելությունները կատարել են ըստ նախապես կազմված այցելությունների գրաֆիկի և պետական չափորոշիչների: Ա խմբի շահառուներին կատարել են շաբաթական 2-ական այցեր, իսկ Բ խմբի շահառուներին՝ շաբաթական 1-ական այց: Ըստ անհրաժեշտության կատարել են նաև լրացուցիչ այցելություններ: Այցելությունների ժամանակ կատարվել են վերքերի մշակումներ, տակդիրի փոխում, արյան ճնշման, թթվածնի քանակի, շաքարի մակարդակի չափումներ, դեղորայքի ընդունման վերահսկում, միջմկանային , ներերակային ներարկումներ, խորհուրդներ, վերականգնողական վարժություններ: Բուժքույրերը մշտական կապի մեջ են եղել շահառուների թաղամասային բժիշկների հետ, ստացել են պետության կողմից հատկացվող դեղորայքը:
2 շահառուների համար կազմակերպվել է շտապ բուժ.օգնության կանչ և շահառուների տեղափոխում Վանաձորի բժշկական կենտրոն:

**Մշակութային միջոցառման կազմակերպում**

Մայիսի 25-ին ծրագրի 6 շահառուներ մասնակցել են «Աստերի» հունական քաղցրավենիքի արտադրամաս-սրճարանում կազմակերպված խոհարարական աշխատարան-վարպետաց դասի, որին մասնակցեցին նաև Գյումրու համանուն ծրագրի տարեցները և «Սաքինե» փոքր խմբով տան երեխաները: Միջոցառման նպատակը սերունդների միջև հաղորդակցության կամուրջներ ստեղծելն էր՝ խթանելով փոխըմբռնումը, փոխադարձ հարգանքը և հոգատարության մթնոլորտի ստեղծումը: Մի քանի ժամ շարունակ ստեղծված ջերմ մթնոլորտում տարեցներն ու երեխաները պատրաստեցին

համեղ ուտեստներ, ինչը համեմվեց հաճելի զրույցով, պատմություններով ու կատակներով: Միջոցառման ավարտին սրճարանի կողմից մասնակիցներն արժանացան պատվոգրերի և մրցանակների, ինչպես նաև համտեսեցին իրենց իսկ պատրաստած ուտեստները:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են շաբաթական աշխատանքային հանդիպում-քննարկումներ, որոնց ժամանակ ամփոփվել են կատարված աշխատանքները, առաջացած հրատապ խնդիրները և պլանավորվել հաջորդ շաբաթվա անելիքները:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Խոհարարական աշխատարան, վարպետաց դաս՝
https://www.facebook.com/photo?fbid=1122032519961014&set=pcb.1122038776627055
«Հիվանդի խնամք» թեմայով դասընթաց
https://www.facebook.com/photo?fbid=1119703826860550&set=pcb.1119704893527110

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

Շահառուների գերակշիռ մասը, առողջական վիճակով պայմանավորված, չի կարողանում մասնակցել մշակութային միջոցառումներին:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Ծրագրի հաջորդ եռամսյակում պլանավորվում է շարունակել ծրագրով նախատեսված բոլոր գործողությունները, մասնավորապես.

1) կենցաղային սպասարկում
2) բժշկական օգնություն և սպասարկում
3) սոցիալ-հոգեբանական օգնություն
4) խորհրդատվության օգնություն
5) Լվացքատան ծառայություն

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

Ապրիլի 21-25-ը ծրագրի սոցիալական աշխատողները մասնակցել են ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի Նախարարության Սոցիալական Հարցերի Ազգային Ինստիտուտի կողմից կազմակերպված «Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության իրավական հիմքերը» թեմայով վերապատրաստման և որակավորման դասընթացին:
Հիմնական թեմաները՝

- Ծերացման հարցերին, ինչպես նաև տարեցների սոցիալական պաշտպանության և իրավունքների ապահովմանն առնչվող օրենսդրություն
- Անձի ֆունկցիոնալության գնահատում
- Սոցիալական աշխատանք տարեցների հետ
- Տարեցների հետ տարվող հոգեբանական աշխատանք

Ապրիլ ամսին Վանաձորի պետական բժշկական քոլեջի քույրական գործ բաժնի ավարտական կուրսի ուսանողների համար շարունակվել են «Հիվանդի խնամք» թեմայով դասընթացները, որոնց մասնակիցները սովորում են խնամքի գործողությունների պլանավորում, բուժքույրական խնամք՝ հարմարեցված տնային պայմաններին և տնային խնամքի առանձնահատկություններին: Դասընթացները մեկնարկել էին փետրվարին:

Մայիսի 19-23-ը ծրագրի բուժքույրերը սոցիալական խնամողների համար կազմակերպել են «անկողնային հիվանդի խնամք» թեմայով դասընթաց՝ հագեցած տեսական և գործնական աշխատանքներով: Քննարկվել են կոնկրետ դեպքեր, որոնց ժամանակ առանձնացվել են սոցիալական խնամողի և բուժքրոջ դերը, վերջիններիս համատեղ աշխատանքը, համագործակցությունը՝ խնամքի ծառայությունների պլանավորման և կազմակերպման գործընթացում:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան | Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան |
| ______________________ | ______________________ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Ձևաչափ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայկական կարիտաս» ԲՀԿ-ի տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 77/70 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 62 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 3 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 3 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 3 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 67 |
| 1.4 | այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձինք | 0 |
| 1.4.1 | այդ թվում՝ կին | 0 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –7 (6 կին, 1 տղամարդ)<br>Բ - 63 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 70 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 70 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 70 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 6 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 8 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*)<br>• *լվացքային ծառայություն* | 20 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան

«11 » հուլիսի, 2025 թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գլխավոր քարտուղար՝ Ա. Մուրադյան

____________________

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան

____________________

(ստորագրություն)